



ՈՒՐԱԹ, 22 ԱՊՐԻԼԻ 2016Թ.  
№ 12 (388)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ի Է՛ի ատ՛Ս » Կ Բա՛նո՛ւ Կ Կա՛նՉՕ,  
Օ» Կ Կա՛նՉՕ ատ՛ Է՛ի Կա՛նՉՕ,  
Օ» Կ Կա՛նՉՕ » Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ  
Օ Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ  
Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ  
Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ  
Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ  
Կ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ Կա՛նՉՕ



4 հոկտեմբերի 2015թ., Դարբաս

## Զանգեզուրի կայազորային հոսպիտալում

Զ Ե՛ԱՕՉՅ՝ Ե՛ Կ Կա՛նՉՕ

Սիսիանի Աղիտու համայնքում 1992թ. պաշտպանության նախարարի հրամանով սկսեց կառուցվել Զանգեզուրի կայազորային հոսպիտալը, որ առաջին հիվանդներ ընդունելու հնարավորություն ունեցավ 1995թ. փետրվարին: Այդ տարիների ընթացքում հարուստ ավանդույթներ ձեռնարկած հոսպիտալի համբավը տարածվել է ողջ հանրապետության տարածքում: Եվ պատահական չէ, որ երեք տարի անընդմեջ ծանաչվել է հանրապետության լավագույն հոսպիտալ:

Հոսպիտալի պետ, վիրաբույժ, բժշկական ծառայության փոխգնդապետ Դանիել Մկրտչյանի տեղեկացմամբ՝ հոսպիտալը սպասարկում է Եղեգնաձորից մինչև Ագարակ ընկած հատվածը, ինչպես նաև մինչև Որոտան (Կուրաթլու) քաղաքը՝ հարակից բնակավայրերով, այսինքն՝ ՊՆ զինված ուժերի 1-ին և 4-րդ բանակային կորպուսները և նշված տարածաշրջանների ուժային կառույցները:

Հոսպիտալն ունի վեց բաժանմունք՝ ընդունարան, ախտորոշման, վիրաբուժական, թերապեւտիկ, ինֆեկցիոն, անզգայացման և վերականգնողական, եւ չորս կաբինետ՝ ատամնաբուժական, դեղատուն, ֆիզիոթերապեւտիկ և ճառագայթային ախտորոշման: Եթե թվերով ներկայացնենք, 2015թ. հոսպիտալում ստացված բուժում է ստացել 2800 հիվանդ, ամբուլատոր՝ 10000: «Բնականաբար աղմինիստրատիվ գործով զբաղվելը ժամանակատար է, բայց ես կոչումով նախաձեռնեցի թիշկ եմ, ինձ հոգեհարազատ է բուժական գործը, եւ այնպես եմ կազմակերպում իմ աշխատանքը, որ այն չտուժի», - նշեց Դանիել Մկրտչյանը:

Հոսպիտալն անվճար սպասարկում է պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողներին, նրանց ընտանիքի անդամներին՝ հայր, մայր, կին, ամուսին, երեխաներ, զինվորական հաշմանդամներին և զինվորական վետերաններին, օրենքով սահմանված այլ անձանց: «Հոսպիտալի ստեղծման օրվանից արմատավորվել է հիվանդների կարգավիճակի մասին չհարցնելու ավանդույթը: Մեզ համար նշանակություն ունի՝ հիվանդը վճարովի, թե՞ անվճար պիտի սպասարկվի: Թող ինքնագովազդ չթվա, բայց բոլորին հավասար եւ միանշանակ վերաբերվելու ավանդույթը շարունակվում է նաև իմ ղեկավարման օրոք», - նշեց հոսպիտալի պետը:

Քաղաքացիական բնակչությունը, բացի գերատեսչության սահմաններում անվճար սպասարկվող անձանցից, սպասարկվում է վճարովի հիմունքներով, եւ, ինչպես հիվանդներն են նշում, մատուցված բժշկական ծառայությունների դիմաց ֆինանսական ծախսերը մատչելի են: Տարածաշրջանի հիվանդանոցների հետ մրցակցությանը, եթե, իհարկե, կա այդպիսի երեւույթ, Դանիել Մկրտչյանը դրական է վերաբերվում եւ հավելում, որ դա միայն նպաստում է բժշկական կենտրոնների որակական հատկանիշների բարձրացմանը:

Տարիներ առաջ հոսպիտալը Սիսիանի բժշկական կենտրոնի հետ միավորելու խոսակցությունները տարակարծությունների տեղիք տվեցին: Դ.Մկրտչյանի հավաստմամբ՝ այս

## Ամենայն Հայոց կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ այցելել է Տաթևի վանական համալիր

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն ապրիլի 14-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանի, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի ուղեկցությամբ այցելել են Տաթևի վանական համալիր:

Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը շրջել են վանքի տարածքում, ծանոթացել կատարված աշխատանքներին, քննարկել հոգևոր կյանքին, եկեղեցացիության ծրագրերին և մարզի սոցիալական խնդիրներին առնչվող հարցեր:

Մարզպետն ընդգծել է Սյունիքի մարզպետարանի եւ Սյունյաց թեմի միջև առկա ջերմ գործընկերային հարաբերությունների մասին՝

պատրաստակամություն հայտնելով այսուհետ եւս աջակցել Հայոց եկեղեցու ազգանպաստ առաքելությանը:

Հայոց հայրապետն իր երախտագիտությունն է հայտնել մարզպետին և մարզային իշխանություններին՝ թեմի ծրագրերին և եկեղեցական դասին ցուցաբերվող զորակցության համար:

14.04.2016, syunik.mtaes.am

## Գյուղապետ էր եւ սիրելի բուրդ ախլաթյանցիների համար

«Արդարամիտ, ազնիվ, անարդարությունների դեմ պայքարող ու սկզբունքային անհատականություն էր Ախլաթյանի համայնքապետ Արմեն Բեգլարյանը, ով թե՛ փոքրի, թե՛ մեծահասակի սիրելին էր: Հավատարիմ ընկեր, նպատակասլաց ու պատրաստակամ անձնավորություն, որ դժվարության մեջ գտնվողին երբեք միայնակ չէր թողել: Նույնիսկ ամենադժվարին պահերին հունորի զգացումն ու լավատեսությունը չէր կորցնում», - այսպես բնութագրեց Ախլաթյանի միջնակարգ դպրոցի պատմության եւ հասարակագիտության ուսուցիչ, պահեստազորի սպա, Արմենի մտերիմ ու գաղափարական ընկեր Արկայա Բադալյանը: Արմեն Բեգլարյանը ծնվել է 1973թ. ապրիլի 10-ին Ախլաթյան գյուղում: 1980-1988թթ. սովորել է Ախլաթյանի միջնակարգ դպրոցում:

1990թ. ավարտել է Սիսիանի N3 միջնակարգ դպրոցը: Ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ, սակայն Արցախյան պատերազմը սկսվելուց հետո կիսատ է թողել ուսումը եւ մեկնել ռազմաճակատ: Մասնակցելով մի շարք մարտական գործողությունների՝ վիրավորվել է, բայց չի լքել մարտի դաշտը մինչև զինադադար կնքելը:

1994-1995թթ. աշխատել է Երևանում, բայց մոր հիվանդության պատճառով վերադարձել է հայրենի գյուղ (հայրը, ով Հայրենական մեծ պատերազմի մասնակից էր, մահացել է 1990թ.):

Ակտիվորեն մասնակցել է գյուղի հասարակական կյանքին՝ համախմբելով գյուղի



Արմեն Բեգլարյան

Տեղափոխված զինվորները «նի՞ Շնի՛ -Ա՛ ՆՅ՛ Ի՛ Յ՛ ՍՅ՛ նի՛ ձօ՞ՒՅ՛ Կ՛ . ձի՛ ձօ՞Ս՛

# Իսկ լեռան կապարին օրը չի մթնում

Մի քանի օր առաջ էր՝ ապրիլի 3-ին, երբ Սյունիքի մարզի կամավորականները մարզպետ Սուրեն Խաչատրյանի գլխավորությամբ մեկնեցին Արցախ։ Ստեփանակերտ մայրաքաղաքում նրանց դիմավորեց ԼՂՀ վարչապետ Արայիկ Զարուբյանը։ Դրանից հետո նույն գիշերը ջոկատները ճանապարհվեցին մարտական դիրքեր։ Սիսիանի եւ Կապանի ջոկատները՝ Թալիշ, Գորիսի, Մեղրու, Քաջարանի ջոկատները՝ Եղնիկներ։ Ավելի ուշ, ութ կյանք խլած հայտնի ողբերգական պատահարից հետո, Սիսիանի եւ Կապանի ջոկատները տեղափոխվեցին դարաբաղաադրեջանական շփման մեկ այլ գիծ՝ Մատաղիս։ Եվ ահա տասը օր է՝ Սյունիքի կամավորական ջոկատները հակամարտության գոտու առաջնամասում են՝ ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանումների հետ միասին հսկելով Արցախի սահմանների անձեռնմխելիությունը...

Ապրիլի 13-ին «Այունյաց երկրի» ստեղծագործական խումբը (Սամվել Ալեքսանյան, Վահրամ Օրբեյան, Զամելտ Գեորգյան, Ռաֆիկ Զարուբյան) հակամարտության հյուսիսային թեւում էր, նպատակն առաջնագծի վիճակին եւ Սյունիքի կամավորական ջոկատների գործունեությանը ծանոթանալն էր։ Մատաղիսում էին, երբ հերթական անգամ այնտեղ եկավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ ուղեկցությամբ Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի եւ ԵԿՄ Գորիսի տարածքային կառույցի ղեկավար Սուրիկ Բաղդասարյանի՝ ճակատայինների համար առաջին անհրաժեշտության պարագաներ բարձր թեմնատար մեքենայով հանդերձ։ Այդ պահին այնտեղ էին Կապանի ջոկատը (Մամվել Օհանյանի հրամանատարությամբ) եւ Սիսիանի ջոկատի մի

մասը (Աշոտ Սինասյանի հրամանատարությամբ)։ սիսիանցի մյուս կամավորականներն առաջնագծում մարտական հերթապահության էին։ Ջորակայանում, որտեղ այդ պահին հանգստի ժամ էր, իսկական աշխուժություն սկիզբ առավ։ Նախ բոլորը հավաքվեցին ու ողջունեցին մարզպետին, ապա տեղի ունեցան իրավիճակի վերաբերյալ մտքերի փոխանակում, մարդկանց հետաքրքրող հարցերի շուրջ զրույցներ ու քննարկումներ։ Այնուհետեւ մարզպետի ու Սիսիանի, Կապանի ջոկատների հրամանատարների միջեւ տեղի ունեցան առանձնազրույցներ՝ դիրքերում օպերատիվ իրավիճակին, կամավորականների կացությանն ու հատկապես բժշկական ծառայությանն ու առաջիկա հերթափոխին առնչվող... Օրվա վերջին, երբ արդեն մութն ընկել էր, մենք կրկին Մատաղիսի գորակայանում էինք. հրամանատար Աշոտ Սինասյանն արդեն մեկնել էր մի քանի կմ հեռավորության վրա գտնվող մարտական դիրքեր, իսկ այդ ընթացքում գորակայան էր այցելել Սիսիանի քաղաքապետ Աղասի Զակոբջանյանը՝ կամավորականների համար բերելով առաջին անհրաժեշտության պարագաներ. այդ մասին մեզ տեղեկացրեց ազատամարտի սիսիանցի վետերան Զամելտ Շատրյանը, ով դիրքերից վերադարձել էր գորակայանում էր։ Մինչ այդ մեր ստեղծագործական խումբը միացել էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ մեկնել առաջնագծի մեկ այլ հատված՝ Եղնիկներ, որտեղ Գորիսի, Մեղրու, Քաջարանի ջոկատներն էին դիրքավորված։ Մարտակերտից մոտ 18կմ հյուսիս-արեւմուտք գտնվող Մատաղիսը Թարթառ գետի ափին է՝ երեք կողմից շրջապատող լեռների միջեւ։ Գյուղի անունը ծագում է Վաչագան թագավորի դստեր անունից, որի պատվին էլ ժամանակին կառուցվել է գյուղը։ Այդ տարածքում է Եղիշե



Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի Գորիսի կամավորականների հետ մարտական դիրքում



Ջախից աջ՝ ԵԿՄ Գորիսի փարածջային կառույցի ղեկավար Սուրիկ Բաղդասարյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, հրամանատարներ Աշոտ Սինասյանը, Մամվել Օհանյանը

Առավել ապշեցնող էր դժվարամատչելի այդ վայրերում հայկական ռազմական ստորաբաժանումների արհեստավարժ ու վստահ պահվածքը։ Ես, անշուշտ, հեռու եմ փորձագիտական բնույթի եզրակացություններ անելու հավակնությունից, բայց չեմ կարող չասել՝ աշխարհի ոչ բոլոր բանակները կարող են նման տեղանքում վստահ ու արդյունավետ գործել։ Սա, հիրավի, աշխարհի այն հատվածներից է, որտեղ, որքան էլ տեխնիկական առաջադիմություն ապրի, որոշիչը լինելու է զինվորը՝ իր մարտական ոգով ու ֆիզիկական կոփվածությամբ։

առաջալի վանքը, մերձակայքում բազմաթիվ գյուղատեղիներ են։ Առաջին անգամ էի շփման գծի այդ հատվածում... Այն, որ ամենուրեք ռազմական բնույթի նախապատրաստական աշխատանքներ էին տարվում, այլևս չէր զարմացնում։ Իսկ ԼՂՀ ՊԲ մարտական հզոր դիրքերը միայն հպարտություն էին ներշնչում մեզ։ Ապշեցնող էր հատկապես տեղանքի ռելիեֆը՝ թավ անտառներով ծածկված։

Կամավորականների խումբ



Եղնիկներ բարձրանալու ճանապարհին անցանք Տոնաշեն գյուղի մերձակայքով։ Այդ գյուղի հիմնադրման մասին ավանդույթը եւս Վաչագան թագավորի անունն է հիշում։ Նրա տոհմակից Տոնին (Դոնին) է հիմնադրել գյուղը, որտեղ էլ ժամանակին կառուցվել է Սուրբ Գեորգ եկեղեցին։ Իշխող լեռան գագաթին Գորիսի, Մեղրու, Քաջարանի կամավորական ջոկատներն էին՝ ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումների հետ հաստատուն կանգնած։ Այդ ջոկատի մարտիկները նույնպես ոգեւորությամբ ընդունեցին Սուրեն Խաչատրյանին։ Տպավորությունն այն էր, որ Սուրեն Խաչատրյանը նրանց համար սոսկ մարզպետ չէ, այլ հրամանատար. անձամբ ճանաչում է յուրաքանչյուրին, իսկ նրանք՝ մարզպետի։ Ճանաչելն էլ մի կողմ, իրար վստահում են, միմյանց հավատում... Կամավորականների մասին այս օրերին շատ բան կարելի է լսել, նաեւ հակասական, բայց նրանք մեծ մասամբ արժանապատիվ տղաներ են, պինդ, համարձակ, ամենադժվար պայմաններում անգամ երկրին ծառայելու պատրաստ։ Միաժամանակ, անկեղծ լինեց, այնքան էլ դյուրին չէ նրանց կառավարելը։ Սակայն վերստին համոզվեցինք՝ Սուրեն Խաչատրյանի հրամանատար լինելը հաճ է նրանց, ինչպես եւ Մելիքսեթ Պողոսյանի, Աշոտ Սինասյանի, Մամվել Օհանյանի, Սուրիկ Բաղդասարյանի հրամանատար լինելը... Իսկապես, կամավորական ջոկատում հրամանատար չի նշանակվում, նրանք ծնվում են ժամանակի մեջ եւ բոլորի կամքով... Լեռնագագաթին եւս մարզպետի հետ քննարկումներ էին, մտքերի փոխանակում, անհապաղ լուծում պահանջող հարցերի վերհանում, այնուհետեւ՝ շրջայց հարյուրավոր մետրերով ձգվող խրամատներում... 1990-ականների պատերազմի ժամանակ Սյունիքի ինքնապաշտպանական ջոկատները կռվում էին կրակագծի հարավային թեւում, եւ ամեն քարն ու ապառաժը նրանց ծանոթ էր։ Զյուսիսային թեւը նոր միջավայր է տղաների համար։ Եվ պետք էր ոչ միայն տեղանքին ծանոթանալ, այլեւ դիրքերն ուժեղացնել, նոր խնդիրներին համապատասխանեց-

ՏԵՆԻՍԻՆՆԵՐԸ ԵՎ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՆԱՆԱՏԱՐՈՒՄԸ

նել, ու, փառք Աստօն, այդ խնդիրները լուծվում են կամ գրեթե լուծվել են: Մեկիցսեք Պողոսյանի իրամանատարությամբ որոշ չափով բարելավվել են մեր խրամատները, պաշտպանական նշանակության մյուս կառույցները: Հաճելի էր այդտեղ տեսնել Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին, ով իրամանատարն է Քաջարանի կամավորական ջոկատի: Առաջնագիծ գնալուց հետո հնարավոր չէր հեռախոսով կապ հաստատել նրա հետ, այնպիսի տեղանքում է դիրքավորված ջոկատը, որ միայն ներքին կապով կարելի է խոսել: Զինվորական հանդերձանքով ու հրազենով քաղաքապետի տրամադրությունը բարձր էր, հոգնածություն չկար նրա դեմքին:

Այնտեղ էին Մեղրու իրամանատարները՝ քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանն ու փոխգնդապետ Սամվել Հայրապետյանը: Վերջինս էլ Արցախյան ազատամարտի վետերան է եւ խրոխտ պահվածքով ու հարուստ փորձով ժամկետային զինծառայողների կողքին է:

Առաջնագծում եղանք մի դիրքում, որի պահպանությունը վստահված էր կորնիժորցիների ջոկատին: Այնտեղ էր Լարիսա Գալստյանը, ով ապրիլի 3-ին սյունեցի կամավորականների շարքում մեկնել էր սահման (այդ մասին՝ «Սյունյաց երկրի» 2016թ. ապրիլի 8-ի համարում):

Ի՞նչն էր նաեւ ուշագրավ՝ ՊԲ ժամկետային ծառայողները եւ կամավորականները, որ կողք կողքի նույն խնդիրն էին լուծում, այնքան էին մտերմացել, որ, կարծեք, տարիների մարտական ընկերներ լինեն: Դա էլ բնական է, թեւ տարբեր կարգավիճակով, բայց նույն առաքելությամբ են խրամատում հայտնվել...

Իրիկնամուտ էր, երբ եղնիկներից հետոքարձի ճանապարհը բռնեցինք: Խրամատներից պարզորոշ երեւացող հրաշք Գյուլիստանը՝ մերօրյա Շահումյանի տարածքը՝ բռնազավթված Աղբթեաճի կողմից, մնաց հետեւում:

Մենք չտեսանք, սակայն, Մռավի գագաթը: Համոզված ենք՝ թախծոտ չէր, այլ հպարտ էր, ինչպես դարեր շարունակ. պարզապես օրն էր ամպամած: Ի վերջո, չէր էլ կարող այդ լեռ-խորհրդանիշը հպարտ չլինել, քանզի մնամ գավակներ ունի:

Դրանում համոզվեցինք նաեւ Մարտակերտում, որտեղ կյանքը բնականոն հուն էր վերադառնում: Իսկ մարտակերտից հեռու տրամադրությունը բնութագրելու համար վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ռադիկ Առուշանյանը վերջին օրերին տարածված մի խոսակցություն պատմեց մեզ:

Մարտակերտի շրջանի ռմբակոծությունից հետո շրջան էին ժամանել նաեւ արտասահմանցի լրագրողներ: Թալիշում նրանցից մեկն արցախցի լրագրողի ուղեկցությամբ այցելում է գյուղի 101-ամյա տատիկին՝ հարցնելու նրա որպիսությունը, իմանալու գյուղացիների տրամադրությունը (իհնգ թալիշցիներից մեկն էր, ով աղբթեաճական ներխուժման ժամանակ դուրս չէր եկել գյուղից):

Տեսնելով արցախցի լրագրողին՝ մեծ մամեն նրան է դիմում.

- Դա՛, փախ, դեմքը է ինձ ծանոթ ա: - Արցախի հեռուստատեսությունից եմ, երեւի հեռուստաէթերից եք ինձ ճանաչում:

- Հա՛, բալա՛, հիշեցե՛ք, հիշեցե՛ք, - ասաց մամիկն ու շարունակեց, - բա էն մինը հուլիս: - Են մինն ալ Բրյուսելից ա, լրագրող ա:

- Վա՛՞ք յուռանամ ես, ընդէր դրությունը փիս ա, ասի մղայիտ կենա, մուք պընդ եք, թող մեզ հետա մտածե՛ք վե՛ց...

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
14.04.2016թ.

## ԱՇՈՏ ՄԻՆԱՍՅԱՆ. «Հրադադարի ռեժիմի խախտումներ գրեթե ամեն գիշեր արձանագրվում են»



**Սիսիանի ջոկատի իրամանատար Աշոտ Մինասյանին նախորդ անգամ հանդիպել էինք Սիսիանում՝ Արցախյան վերսկսված պատերազմում զոհված սիսիանցի ազատամարտիկների հուղարկավորության ժամանակ:**  
**Ապրիլի 13-ին իրամանատարին հանդիպեցինք Մատաղիսում եւ, բնականաբար, մեր զրույցն իր ղեկավարած ջոկատի կողմից իրականացված սահմանների պաշտպանության հրամանատարին հուզող խնդիրների մասին էր:**

**- Սահմաններում մախ առօրյա մի հարց կարող ենք տալ, ինչպե՞ս էք:**

- Մարտական, լավ են: **- Եվ ամբողջ ջոկատն էլ այդ տրամադրությունն ունի:**

- Ամբողջ ջոկատն էլ է այդ տրամադրությամբ, նաեւ վրեժով լցված, կորցրած ընկերների կիսատ թողած գործը շարունակելու պատրաստակամությամբ:

**- Հիմա որտե՞ղ է ջոկատը, ոնց որ մի մասն էլ այստեղ:**

- Քիչ մասն է այստեղ, ջոկատը հիմնականում գտնվում է 6-րդ պաշտպանականի 3-րդ գումարտակի դիրքերում, կանգնած ենք ժամկետային զինվորների հետ, խիզախ, ընտիր տղաներ են, մնան հերոս զինվորներ չկան: Այստեղ քիչ մարդ կա, մոտ տասը հոգի, հիվանդներն են, որոնց դիրքերից իջեցրել ենք բուժման համար, որից հետո էլ դիրքեր են բարձրանալու: Եվ բազայի սպասարկումն է, որոնք սնունդ են հասցնում դիրքապահներին: Գործի բերումով են այստեղ, միշտ դիրքերում են լինում:

**- Եվ երկա՞ր տարածք է վստահված ձեր պաշտպանությանը:**

- Տարածքի երկարությունը չէ խնդիրը, այլ վստահավորությունը: Դա պայմանավորված է ռելիեֆով, որովհետեւ մենք տեղավորված ենք հարթության մեջ, փոքրիկ բլուրներից, աշխատում ենք շրջանածե պաշտպանությամբ, որ թշնամին անցում տալու դեպքում կարողանանք նաեւ նոր պաշտպանություն բռնել, որ դիրքը չզիջենք:

**- Իսկ կրակը դադարեցնելուց հետո խախտումներ լինո՞ւմ են:**

- Այս գիշեր միայն չի եղել, մնացած գիշերներին եղել են, հրադադարի ռեժիմի խախտումներ գրեթե ամեն գիշեր արձանագրվում են:

**- Դուք համարժեք պատասխան տալի՞ս էք:**

- Չպատասխանելը սխալ կլինի, որովհետեւ թշնամին կմտածի, թե մենք թույլ ենք:

**- Որքանով տեղյակ ենք, դուք 6-րդ պաշտպանական գոտում տեղաբաշխված կամավորականների ընդհանուր իրամանատարն եք, կարելի՞ է մնան բնութագրում տալ եւ ոչ միայն Սիսիանի ջոկատի իրամանատար:**

- Ես կարող եմ այսպես ասել, բոլոր տղաներն ինձ հետ կապի մեջ են, բայց կորոշմանցով բառը չեն կարող օգտագործել, որովհետեւ հեռակառավարման կապը չի աշխատում, որովհետեւ ամեն գումարտակ առանձին է աշխատում: Ես կապ ունեմ կենտրոնի հետ, ես երկու կապով եմ աշխատում: Բացի դրանից էլ՝ հեռախոսի կապը չի գործում: Դիրքերի հետ մշտապես կապ կա, դիրք կա, որի հետ չենք կարողանում կապ հաստատել, բայց կողքի դիրքերից կարողանում են ինֆորմացիա հաղորդել, թե ինչ է կատարվում: Արագ ինֆորմացիա են տալիս:

**- Սիսիանի ջոկատը շատ ցավալի կորուստներ ունեցավ, այդ ողբերգական պատահարից հետո ինչպիսի՞ հոգեվիճակում են ջոկատի տղաները:**

- Տխուր են, հոգեպես ընկճված, բայց «կտրված» չեն, վճռական են տրամադրված: Եվ չենք հեռանալու դիրքերից, մինչեւ համապատասխան իրաման չլինի: Ինձնուցից ավելի մարդ կա ջոկատում, տասը հոգի ռեզերվային են, մյուսները դիրքերում են լինում:

**- Իսկ տղաների մեջ հոգնածություն կա՞, ամեն դեպքում այստեղ տեսնում ենք նաեւ տարիքն առած մարդկանց:**

- Կա, բնական են համարում դա: Տարիքն իր խոսքն ասում է: Երիտասարդ տղաներ ունենք, ովքեր անփորձ են, բայց արդեն կարողանում են դիրքի տեղ լինել: Դիրքերի իրամանատարներն նշանակել են մեր նախկին զինվորականների՝ կոչումով փոխգնդապետ, մայոր, ովքեր տարիքը լրանալու հետ կապված գորացրվել են բանակից,

## ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ. «Հրադադար կա, բայց այնպես չէ, որ խախտումներ չկան...»



**Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանին ապրիլի 3-ից իր աշխատասեյակում չես գտնի: Նա նորից ղեկավարում է Գորիսի երկրապահ կամավորների ջոկատը: Գնդապետին այս անգամ հանդիպեցինք մարտական դիրքերում եւ կարճ զրույց ունեցանք:**

**- Պարոն գնդապետ, ինչպե՞ս էք գնահատում օպերատիվ վիճակը ձեր ջոկատի պաշտպանությանը վստահվածում:**

- Այս պահին ապահով ենք, ամուր պաշտպանություն ունենք, կատարել ենք ինժեներական աշխատանքներ, համագործակցում ենք ԼՂՀ ՊԲ-ի եւ դասակի, եւ վաշտի, եւ գումարտակի, եւ զնդի իրամանատարների հետ: Ինչով կարող ենք, աջակցում եւ օգնում ենք: Այս պահին գտնվում ենք առաջնագծում՝ Տոնաշենի եւ Եղնիկների հատվածում է սա: Դեպի ձախ Գյուլիստանն է, մեր դիրքերը Շահումյանի շրջանին են սահմանակից:

**- Ամսի 5-ի ժամը 12-ին կրակը դադարեցնելու հրաման է տրված, դուք դա գո՞ւմ եք, թե՞ խախտումներ կան:**

- Հրադադար կա, բայց այնպես չէ, որ, ասենք, խախտումներ չկան: Եթե տեսանելի լինեն զինվորը, մեքենան, էլի կրակոցներ կլինեն, ակամանեսի եւ այլն: Իրենց կողմից խախտում է դա, բայց մենք այստեղ բարձր դիրքերում ենք: Եվ ինժեներական կառույցները, եւ խրամատները նորմալ արված են:

**- Եթե փորձեն մախածոնություն դրսևորել, դժվար կլինի, չէ՞:**

- Չեն կարող, անհնարին է:

**- Այստեղ տեսնում ենք ժամկետային զինծառայողների:**

- Կեցցեն մեր զինվորները, մեր սպաները, ովքեր միշտ կանգնած են այս բարձունքներում: Իրենց պիտի գոտեպնդենք, իրենց կողքին կանգնենք, որ տղաներն ուժեղ լինեն:

**- Թիկունքի աջակցությունը գո՞ւմ եք:**

- Առաջին օրվանից, երբ հակառակորդը սկսեց մարտական գործողություններ, Սուրեն Խաչատրյանը Սյունիքի մարզի բոլոր կամավորներին հավաքել է: Մի մասը մնացել է ռեզերվում, մի մասը՝ Մատաղիսում, մենք, թվով 150 հոգի, եկել ենք այս հատվածը: Համագործակցում ենք

գործասի իրամանատարի հետ, դիրքի տերն իրենք են, շարքային զինվորն էլ, եթե դիրքի պատասխանատուն է, ինչ ասում է, անում ենք: Մեզ պիտի պահենք այնպես կարգապահ, որ մեզանից մի բան սովորեն: Ոչ թե ասեն, բա եկան, ոչ մի բան չարեցին ու զնացին:

**- Բայց նաեւ պիտի ասենք, որ կամավորներն արդեն 20-25 տարով մեծացել են: Դժվար չէ նրանց համար:**

- Մեր տղաներն այնպիսի տղաներ են, որ եւ վիրավոր կա, եւ մարտական գործողությունների մեջ փորձված մարդիկ, եւ փորձի փոխանակում է, եւ որպես խորհրդատու, որպես մարտական գործողությունների մասնակից, աջակցում ենք այսօրվա զինվորներին, ջոկերին, դասակներին, վաշտերին: Ինչքան կարողանում ենք, աջակցում ենք:

**- Ձեզ հաջողություն ենք մաղթում, ի՞նչ կավելացնեիք ասվածին:**

- Ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր ժողովրդին, որ այսքան միասնական կարող է լինել, ուզում եմ շնորհակալություն հայտնել այն բանի համար, որ շատերը գանգուլ են եւ ուզում են մեզ միանալ, բայց մենք չենք թողնում: Տեսեք, ինչքան ոգետրիչ է: Այս կռիվն ազգովի ենք մղում, մեր հաղթանակն ազգովի ենք տանելու: 20-22 տարի առաջ, ում մեջ հայրենասիրություն կար, նրանք են զենք բռնել, բայց այսօր մեր զինվորն առաջին գծում է, ուզենք-չուզենք նրա կողքին պիտի կանգնենք:

Առաջինը խաղաղություն են ցանկանում, երկրորդն էլ՝ եթե խախտվի խաղաղությունը, մինչեւ վերջ կանգնելու եւ ազգովին հարթելու ենք, հարյուր տոկոսով, ճիշտ պիտի պլանավորենք, ճիշտ կազմակերպենք, ճիշտ խնդիրները դնենք: Ամեն մի զինապարտ, կամավոր, զինվոր իր խնդիրը պիտի իմանա հստակ: Այստեղ իրամանատարը պիտի քրտնի, համազգեստ մաշի, ցստի իր իրամանատարական դիրքում եւ ճիշտ ղեկավարի: Սա է ամբողջ խնդիրը: Սյունեցիներս միշտ հարավարեւելյան հատվածում ենք կռվել, այս անգամ այնպես է ստացվել, որ Դարաբաղի հյուսիսարեւելյան սահմանն ենք պահպանում եւ ոչ մի խնդիր չունենք:

**Զրույցը՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

ՏԵՆՆԱՅԻՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԵՐՈՒՄ ԵՆՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԱՇՈՏ ՄԻՆԱՍՅԱՆ. «Յրադադարի ռեժիմի խախտումներ գրեթե ամեն գիշեր արձանագրվում են»

Էջ 3  
բայց այսօր կանգնած են դիրքերում: Անենատարիքավորը Ֆելիքս Գրիգորյանն է, այստեղ է, երևի այսպես ինձ հետ կգնա դիրքեր:

- Այս հարցն էլ չենք կարող չտալ, իսկ կենցաղային հարցեր ծագո՞ւմ են:

- Նախ ասեն, որ շնորհակալ եմ մեր ժողովրդին՝ պատրաստակամության, օգնությունների, կազմակերպվածության համար: Մարզպետով սկսած հասարակ գյուղացիով վերջացրած, բոլորին շնորհակալ եմ: Բայց մեր ժողովուրդը չի պատկերացնում, որ այսօր ռազմաճակատ ամեն ինչ պետք չէ ուղարկել: Մի քանի անգամ բացատրել եմ. Միսիանում, օրինակ, ստեղծվել է կոորդինացիոն խորհուրդ: Բայց մարդիկ կան, ովքեր կարծում են, թե եթե իրենք իրենց ձեռքով բերեն սնունդը հասցեն մեզ, մեզ մեծ լավություն են անում: Մեզ պետք չէ դա: Ավելորդ ծախս է. անտեղի սնունդ, այստեղ աղբ է գոյանում, ինչի՞ համար: Ավելի նպատակահարմար է այդ սնունդը իրենց ընտանիքում մնա, մեզ ուղարկեն մի վրան, որ դիրքը պահող զինվորն ամբողջից պաշտպանվի: Այ, դրա կարիքն ունենք: Թե չէ, այդքան մուրաբաներ ինչի՞նչ է պետք: Ժողովրդի կամեցողությունն ինձ գոհացնում է: Յուրաքանչյուր գյուղ ցանկանում է իր օգնությունը բերել, ո՞ւմ համար, հանուն ինչի՞: Ժողովուրդ ջան, ձեր զինվորի համար արեք այն, ինչ որ իրենք են ուզում, այլ ոչ թե այն, ինչ որ դուք եք ուզում: Դրանք տարբեր բաներ են:

- Առհասարակ ձեր դիրքերից տեսանելի՞ են հակառակորդի տեղաշարժերը:

- Մեր դիրքերից տեսանելի են, մենք այդ ամեն ինչը տեսնում ենք, իրենց մոտ ահագին կուտակումներ կան, դիրքերի բարելավում կա, իսկ մենք պատրաստ ենք դրան դիմակայելու: Մենք ունենք հատուկ սարքեր, մեր տղաները տեսնում են, ուսումնասիրում են, հետախուզությունը համապատասխան ինֆորմացիա ունի, համապատասխան քայլեր ձեռնարկվում են:



- Դուք դիրքերում կանգնած եք ժամկետային զինծառայողների հետ, ինչպե՞ս է նրանց տրամադրությունը:

- Շատ բարձր: Յերուսական տղաներ են, երկիրը, ժողովուրդը, ազգը մեր զինվորի վրա են հույս դրել, զինվորը դա գիտակցում է: Առաջին օրը հարվածն իրենց վրա են վերցրել և դիմացել: Կեցցեն նրանք, հրաշք տղաներ են:

- Նաև տեղյակ ենք, որ դուք այս անգամ եկել եք դիրքեր ձեր որդու հետ:

- Իմ ավագ որդին այս պահին այստեղ է (ապրիլի 13, խմբ.), երկրորդ որդիս կգա փոխարինելու եղբորը:

- Դա ձեր ցանկությունն է, թե՞ իրենց:

- Դա իրենց ցանկությունն էր... Ժամանակին իմ ծնողն արգելք չեղավ, որ ես մասնակցեմ կռվին: Դա իրենց պարտքն է, որ պարտավոր են կատարել:

- Ի՞նչ կավելացնեք ավածին,

հավանաբար, կարելու բան ունեք ասելու:

- Մի խնդրանք ունեմ Միսիանի ժողովրդին, Սյունիքի ժողովրդին, ողջ հայ ժողովրդին: Ձեր զանգերով մի՛ ծանրաբեռնեք զինվորին: Երկրորդ՝ ավելորդ խոսակցություններով մի՛ ծանրաբեռնեք այդ հեռախոսները, որոնք լսման տակ են: Դրանով խանգարում եք մեր աշխատանքին: Երրորդ՝ ականջալուր եղեք զինվորի պահանջին և ոչ թե ձեր կամեցածին, կոորդինացրեք բոլոր աշխատանքները երկրապահի և կոորդինացիոն խորհրդի հետ: Սնունդ մեզ անհրաժեշտ չէ, մեզ պետք են հեռախոսակ, գիշերային դիտարկման սարքեր, էլեմենտներ՝ հեռախոսները լիցքավորելու համար...

- Իսկ կոորդինացիոն խորհուրդը տեղա՞յ է այդ ամենի մասին:

- Մեր կոորդինացիոն խորհուրդն ամբողջովին տեղյակ է...

**Ջրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Ջանգեզուրի կայազորային հոսպիտալում

2 ԵՎ 3 ԵՎ 3 ՆՈՒՆՅԱՆ

Էջ 1  
պահին ես հոսպիտալում ու Միսիանի բժշկական կենտրոնը միավորելու վարկած է շրջանառվում: «Դրանից կշահի նախեառաջ բնակչությունը, նաև՝ պետությունը: Պատկերացրեք, եթե մեկ վայրում աշխատեն այդ կողմերը, ինչքան կբարձրանա բժշկական ծառայությունների մակարդակը: Բացի դրանից՝ սարքավորումների կենտրոնացումը մեկ վայրում նույնպես արդյունավետ է: Ներկայումս պատահում է, որ որոշ հետազոտությունների համար հիվանդին ուղարկում ենք Միսիանի բժշկական կենտրոն և հակառակը, իսկ միավորումով շատ հարցեր կարելի է լուծել: Բացի դրանից՝ նեղ մասնագետների կարիք երկու հիվանդանոցներն էլ պարբերաբար ունենում են, իսկ միավորումով կարելի է համալրել կարողային պակասը», - նշեց բժիշկ Մկրտչյանը:

Հոսպիտալում իրենց ծառայությունն են մատուցում ինչպես ռազմաբժշկական ֆակուլտետն ապարտած, այնպես էլ երկտարեցի եւ պայմանագրային հիմունքներով ծառայության անցած բժիշկ-սպաներ, ովքեր ուժ ու եռանդ չեն խնայում հիվանդներին եւ վիրավորներին անհրաժեշտ բուժօգնության հարցում: «Իմ կարծիքով ժամանակի հրամայականն է նաև կայազորային հոսպիտալը վերաօրհանվելու մասնագիտացված բժշկական օղակի», - նշեց հոսպիտալի պետը:



Դանիել Մկրտչյան Հոսպիտալի պետ, վիրաբույժ, բժշկական ծառայության փոխգնդապետ

Տեխնիկական հագեցվածությունը բավարար է, այն, ինչ նախատեսված է հոսպիտալում ունենալու համար, կա, իհարկե, վերագինումն ավելորդ չէր լինի: Սարքավորումների բազայի համալրումը երբեմն կատարվում է այլ կազմակերպությունների միջոցներով, բայց հիմնականում պաշտպանության նախարարությունն է ապահովում:

Ինչ վերաբերում է զինծառայողների ընդհանուր առողջական վիճակին, Դանիել Մկրտչյանը հավաստիացնում է, որ այսօր բանակում ծառայող բոլոր զինվորները պիտանի են ծառայության համար, իհարկե, որոշ դեպքերում առողջական սահմանափակումներով, քանի որ զորակայանի տարիքում զինապարտները մանրակրկիտ բժշկական հետազոտություններ են անցնում, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան առաջատար կլինիկաներում: «Վերջին տարիներին բավականին խստացել է զինակոչիկների բուժզննումը: Այլ հարց է, երբ ինչ-որ հիվանդ»

# Գյուղապետ էր եւ սիրելի բոլոր ախլարթյանցիների համար

Էջ 1  
Երիտասարդներին, նրանց ներգրավելով գյուղի սոցիալական հարցերի լուծման մեջ: Շատ մեծ ներդրում ունեն գյուղում անասնատերերին համախմբելու եւ կաթ արտադրողների ասոցիացիա ստեղծելու գործում:

Առաջին անգամ գյուղապետ է ընտրվել 2005թ. եւ պաշտոնավարման ընթացքում լուծել մի շարք համայնքային խնդիրներ: Նրա անմիջական ջանքերով ամբողջությամբ փոխվել է գյուղի ջրատար խողովակաշարը (4.2կմ) եւ անցկացվել ներհամայնքային ոռոգման համակարգ:

2008-2012թթ. աշխատել է Որոտանի կասկադի համակարգում: 2012թ. ծայրերի զգալի մեծամասնությամբ վերընտրվել է Ախլարթյանի համայնքի ղեկավար՝ ունենալով

հետեւյալ սկզբունքը՝ «Ինձ համար չկան ինձ ծայն չտվողներ, այլ կան համայնքի բնակիչներ»:

Մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ համախմբել համայնքը, ստեղծել գյուղատնտեսական կոլեկտիվ: Արմեն Բեգլարյանը լուրջ ներդրում ունեցավ արտադրություն անասունների համար ջրխմոցներ, արոտատեղեր ստեղծելու գործում: Գործունյա եւ նպատակասլաց համայնքապետը դեռ շատ ծրագրեր ունեւ իրագործելու, համայնքային կարելու խնդիրներ լուծման ընթացքում էին, բայց, ավաղ, թշնամու գնդակից կտրվեց նաեւ նրա կյանքի թելը. ապրիլի 4-ին ԼՂՅ Մարտակերտի շրջանում հակառակորդի ռմբահարման հետեւանքով զոհված սիսիանցիներից մեկն էլ Ար-

մեն Բեգլարյանն էր:

Արկաղյա Բաղայանի տեղեկացմամբ՝ Արմեն Բեգլարյանը ԵԿՄ անդամ էր, եւ ստեղծված իրավիճակում նա միանգամից պատրաստակամություն հայտնեց մեկնել շփման գիծ՝ իր մարտական փորձը հաշվի առնելով: «Միզուցե մենք ուժ չենք, բայց բանակին ուժ տվող ենք», - այսպիսի խոսքով էր բնութագրել Արմենն իր շփման գիծ մեկնելը:

«Հայրենասեր էր ողջ տուրքամբ, չէր սիրում ճոռոմ հայրենասերներին, յուրաքանչյուր խնդրի լուծում էր տալիս առանց երկարաբարակ խոսելու, անելանելի վիճակից դուրս գալու ելք միշտ նրա համար կար», - նշեց Արկաղյա Բաղայանը:

Նա գնաց՝ չվայելելով ընտանիք ունենալու բերկրանքը՝ իր հետ տանելով բազում երազանքներ: Արմեն Բեգլարյանի հիշատակն ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների ու համադրուղացիների սրտերում միշտ վառ կմնա. չէ՞ որ հայրենիքի համար զոհվածները հավերժ ճանփորդներ են:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**







# Սահյանի պոեզիան սահմանը պաշտպանող փղաների կողքին այսօր էլ կռիվ է փակիս հայրենի հողի համար



ՌԵՂԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ապրիլի 14-ը սիրված բանաստեղծ, Այունյաց աշխարհի մեծանուն գավակի Համո Սահյանի ծննդյան օրն էր: Այն ըստ արժանավույն նշելու համար վաղուց էին սկսել նախապատրաստվել թե մայրաքաղաքում եւ թե Այունիքում:

Հանրապետության համապատասխան կառույցների ներկայացու-

ցյուղին. ժամանակակից հայ արձակի նահապետը՝ Ակսել Բակունցը, իր աշխատանքային մկրտությունը հենց այս գյուղում է ստացել, իսկ ժամանակակից պոեզիայի պսակը կրողներից մեկն էլ՝ Համո Սահյանը, եղել է նրա աշակերտը:

Գյուղի կենտրոնական փողոցի աջ ու ձախ կողմերում իրար կպած-կանգնած ավտոմեքենաների առատությունը զարմանք եւ ուրախություն էր պատճառել ոչ միայն համայնքի մանուկներին: Հյուրեր էին ժամանել մարզի համարյա բոլոր քաղաքներից, մայրաքաղաքից: Հասկանալի է, այստեղ էր նաեւ ամբողջ գյուղը՝ մեծ ու փոքրով: Բանաստեղծի՝ ի սկզբանե հյուրասեր տունը չէր կարողացել տեղավորել բոլորին. մարդիկ նեղլիկ պատշգամբում էին, երկրորդ հարկ բարձրացող աստիճանների վրա, զբաղված էր նաեւ փոքրիկ այգու ամբողջ մակերեսը, իսկ ուշացածներն էլ ստիպված էին կանգնել տան դարպասից դուրս: Բանաստեղծին նվիրված ցերեկույթը կրում էր նրա հայտնի ստեղծագործության եւ ժողովածուի վերնագիրը՝ ինձ բացակա չդնեք: Իսկ մինչեւ միջոցառման անդրադառնալը, ընթերցողի ուշադրությունն են հրավիրում այլոց մասին Համո Սահյանի արտահայտած երկու մտքի վրա, որոնք հրաշալիորեն բնութագրում են նախնաւառջ իրեն:

Հայտնի բան է, որ բանաստեղծը քախտ էր, եւ նրանից շատ հարցերի մասին կարծիք հարցնելը նշանակում էր զուր ջանքեր թափել: Տարիներ առաջ նրան խնդրում են թվարկել Այունյաց հողից ծնված մերօրյա մեծերին: Շատ է ջանում խուսափել պատասխանից: Բայց հարց տվողներն ավելի համառ են գտնվում: Ի վերջո պատասխանում է՝ առաջինն Ակսել Բակունցն է, իսկ երկրորդը՝ Գուսան Աշտուր: Երրորդը... Երրորդը դեռ չկա: Կարծում են՝ ընթերցողին պարզ է նման հարց տվողների նպատակը:

Արվեստ արարող մարդուց իր ստեղծագործող ընկերոջ մասին կարծիք հարցնելը հաճախ լի է անակնկալներով: Եվ միշտ չէ, որ այդ անակնկալները հաճելի են լինում: Ասում են՝ տասնյակ տարիներ առաջ մի լրագրող՝ ի՞նչ կարծիքի է իր ստեղծագործող ընկերոջ մասին, հարց է տվել երկու մեծի՝ Հովհաննես Շիրազիին եւ Համո Սահյանին: Համո Սահյանի պատասխանը Շիրազի պոեզիայի համարյա սպառնիչ բնութագիրն է, իսկ իր՝ մարդկային էության բնութագիրը. «Չարենցի մահից հետո Շիրազը կենդանի է պահել հայ պոեզիայի կտրված զարկերակը»: Համաձայնեք, որ նման պատասխան կարող էր տալ միայն մեծը, միայն ազնվագույն մարդը:

Ամեն անգամ, երբ հարկ է լինում հրապարակավ խոսք ասել Համո Սահյանի մասին, լինի դա բանավոր թե գրավոր, միշտ էլ կաշկանդված եմ զգում, ճնշում է մեծ վարպետի անհատական պոեզիային սիրահարված ու դրա գիտակ մեծերի ներկայությունը: Բացառություն չէր նաեւ այս միջոցառումը, որը վարում էր Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը: Նա մասնավորապես ասաց. «Երբ իր ներկայությամբ ակնարկում էինք տուն-թանգարանի ստեղծման մասին, առարկում էր, ասելով՝ ի՞նչ ունեն ցուցադրելու: Հետագայում, երբ տունը վերակառուցվեց, կահավորվեց եւ բերվեց այն տեսքին, ինչպիսին այժմ տեսնում ենք, պարզվեց, որ շատ բան ուներ ցուցադրելու: Բացի այն, ինչ տեսանելի է, այս լուսավոր տանը ցուցադրվում են նաեւ նրա տիրոջ խիղճը, կարոտը, սերն ու հավատը, այն նորից բանուկ է դարձրել դեպի Լոր ձգվող ճանապարհը»: Համայնքի ղեկա-



վար Դավիթ Առուստամյանը հպարտությամբ նշեց, որ Ակսել Բակունցը ճանաչում էր բերեց աշխարհից կտրված փոքրիկ Լորին, իսկ Լորի գավակի Համո Սահյանն էլ ամրագրեց այդ ճանաչումը:

Լորի պատանի բնակիչներն էլ իրենց ողջույնի խոսքում հավելեցին՝ մեր գյուղում ծնված ամեն մի մարդ, լինի կին, թե՛ տղամարդ՝ համով Համո է:

Առիթ է եղել մի քանի անգամ լսել գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Դավիթ Գասպարյանին: Նրա մեկնաբանությամբ յուրաքանչյուր անգամ յուրովի է ներկայանում բանաստեղծը: Այս անգամ էլ բացառություն չէր: Ըստ բանասեր-գիտնականի՝ իսկական պոեզիան ցավից է ծնվում, եւ ինչքան մեծ է այդ ցավը, այնքան զուլալ է նրա խոսքը, որը Համո Սահյանը հասցրել է թունամյանական մակարդակի: Իսկ Հայաստանի գրողների միության նախագահ Եղուարդ Միլիտոնյանն էլ ավելացրեց, որ բանաստեղծին ճանաչելու համար բավարար չէ նրա պոեզիայի հետ ծանոթ լինելը, պետք է անպայման լինել նրա ծննդավայրում: Միայն այստեղ՝ Գյազբեյի փեշերին լինելուց հետո ես հասկանում, թե ինչու է հատկապես Սահյանին հաջողվել աստվածայինը դարձնել մարդկային: Ու թվում է, թե դա անելիս, ասել է թե՛ ստեղծագործելիս, բանաստեղծն առանձնակի ջանք չի գործադրել: Սա միայն թվում է: Բայց թվացյալ չէ այն, որ նրա պոեզիան սահմանը պաշտպանող տղաների կողքին այսօր էլ կռիվ է տալիս հայրենի հողի համար:

Այս տողերը գրելիս հիշեցի նաեւ հանրապետության մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի խոսքն այն մասին, որ մեր հակառակորդները, թշնամիներն էլ են վիզ առնում, որ պարտվել են ոչ միայն հայոց զինվորին, այլ նաեւ հայոց մեծերին՝ Արամ Խաչատրյանին, Վիկտոր Համբարձումյանին, Համո Սահյանին...

Գալիքի, ասել է թե՛ մեր ներկա օրերի մասին ի՞նչ կանխագագացում է ունեցել մեծ մտածողը՝ գրելով, որ մեր արտն արոտ չի դառնա...

Միջոցառմանը պետք է մասնակցեր նաեւ հայ բազմադարյան երաժշտության մերօրյա դասական Տիգրան Մանսուրյանը, ով երկար տարիներ վայելել է բանաստեղծի բարեկամությունը եւ նրա բանաստեղծությունների խոսքերով երգերի շարք ստեղծել: Բանաստեղծին նվիրված հեռուստահաղորդումներից մեկի ժամանակ Տ.Մանսուրյանն ասում էր, որ իր համար գերագույն հաճույք է նրա ստեղծագործությունների վրա աշխատելը, իր խոսքով ասած, այնտեղ երաժշտությունը կա, ինքը միայն որոշ շտկումներ է կատարում: Ահավասիկ՝ Հ.Սահյանի բանաստեղծությունների մեջ «սրտի չափ փոքր է աշխարհի չափ մեծ» երկրում երգը կա, վերքն ու ցավը կան, աշխատասիրությունը, սերն ու հավատը, հպարտությունն ու հայրենասիրությունը կան, մի խոսքով՝ կա այն ամենը, ինչն իրար գունամարելով ստանում ենք Հայաստան... Հավանաբար այս ամենը նկատի ունենալով է պետական գործիչ Ալեքսան Կիրակոսյանն ասել. «Եթե մեկն ուզում է Հայաստանը ճանաչել, պետք է Սահյան կարդա: Ես չգիտեմ մեկ այլ բանաստեղծ, որ Հայաստանն այսքան ամբողջական ներկայացրած լինի»:

Ներկաները դեռ երկար ժամանակ կմնան բանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ Սամվել Մուրադյանի դիպուկ վերլուծության եւ հրաշալի ասմունքի տպավորության տակ: Ահա մի պատահիկ նրա լույսից. «Համո Սահյանը հզոր երեսույթ էր: Նա, իր խոսքերով ասած, քարեղեն քանդակ էր ու Հայաստան աշխարհի հետ կապող քարե կամուրջ: Նա իր թարգմանություններով հայացրել է օտարազգի մեծ բանաստեղծներից շատերին: Իսկ նրա այն տողը, թե «լեռան գագաթին օրը ուշ է մթնում», մեզ ասում է, որ մեր ժողովրդի օրը երբեք չի մթնի»:

Գիտնականը խոստովանում է նաեւ, որ հաճախ է աշխատանքային ժամը օրից հետո ձեռքը մեկնում գիրք վերցնելու ոչ թե աշխատելու, այլ միայն հաճույքի ու

# Բաց դռների օր՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում

**Ապրիլի 15-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում Կապանի, Քաջարանի, Մեղրու եւ Ազարակի դպրոցների 2015-16 ուստարվա շրջանավարտների համար կազմակերպվել էր բաց դռների օր, որի ընթացքում ապագա դիմորդները հնարավորություն ունեցան ծանոթանալու մասնաճյուղի մասնագիտությունների ցանկին, պրոֆեսորադասախոսական կազմին, նյութատեխնիկական բազային եւ շենքային պայմաններին:**

Ողջունելով ներկայերից՝ մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը նշեց, որ, բացի վերոնշյալ դպրոցներ այցելելուց, ավանդական է դարձել նաեւ մասնաճյուղում բաց դռների օր կազմակերպելը: Այն հնարավորություն է տալիս ապագա դիմորդներին տեղում ծանոթանալ բուհի պայմաններին, համապատասխան մասնագետներից ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

«Մասնագիտական կրթություն ստանալու համար մասնաճյուղը բոլոր հնարավոր պայմանները ստեղծել է: Մեր շրջանավարտն այստեղից դուրս է գալիս հարուստ գիտելիքներով եւ համապատասխան պրակտիկական անցնելով ու ստանում ճարտարագետի որակավորում», – նշեց Լեռնիկ Պետրոսյանը եւ հավելեց, որ նախատեսվում է երկու տարվա ընթացքում մասնաճյուղում նույնպես մագիստրոսական կրթություն ստանալու հնարավորություններ ստեղծել:

Մասնաճյուղը 2016-17 ուստարվա ընդունելություն է հայտարարել հետեյալ մասնագիտու-

թյունների գծով՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներ (առկա եւ հեռակա), Տնտեսագիտություն (առկա եւ հեռակա), Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում (առկա եւ հեռակա), Մետալուրգիա (առկա եւ հեռակա), Շինարարություն (հեռակա):

Շրջայցը սկսվեց հեռավար ուսուցման լսարանից, որ հազեցած է ժամանակակից տեխնիկայով եւ հնարավորություն է ընձեռում լսել ոչ միայն տարածաշրջանի առաջատար, այլեւ արտերկրյա համալսարանների մասնագետների դասախոսությունները: Աշակերտները ծանոթացան ֆիզիկայի, քիմիայի, նյութագիտության եւ մետալուրգիայի, ընդերքաբանության ու շինարարության, ինչպես նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների Մոբայլ լուծումների եւ տարածաշրջանի դպրոցականների համար ինժեներական լաբորատորիաներին: Ի դեպ, Մոբայլ լուծումների լաբորատորիայից կարող են օգտվել նաեւ դպրոցականները եւ առհասարակ այն անձինք, ովքեր ցանկանում են համակարգչային գիտելիքներ ձեռք բերել:

Ապագա դիմորդներին ոչ միայն մասնաճյուղի ղեկավարները, այլեւ համապատասխան ամբիոնների դասախոսները ծանոթացնում էին լսարանների կառուցվածքին, մասնագիտությունների առանձնահատկություններին ու դրանց հեռանկարային զարգացումներին:

Մասնավորապես 19 տարվա գործունեության ընթացքում Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում մասնագիտությամբ մասնաճյուղը տվել է ավելի քան 450 ընդերքաբան, որոնց մի մասն արդեն զբաղեցնում է ղեկավար պաշտոններ մարզի այդ շյուղի ձեռնարկություններում: Մարզում



**Լեռնիկ Պետրոսյան  
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի  
փոփոխյալ պաշտոնակատար**

լեռնային հանքարդյունաբերության ձեռնարկությունները հնարավորություն են տալիս այս մասնագիտությամբ սովորելու ընթացքում տեսական գիտելիքներն ամրապնդել այդ ձեռնարկություններում կազմակերպված պրակտիկաների, գործնական եւ լաբորատոր աշխատանքների կատարման շնորհիվ:

Մետալուրգիա մասնագիտությամբ սովորելու դեպքում շրջանավարտը հնարավորություն ունի իր գիտելիքները ներդնել մետալուրգիական արդյունաբերության ոլորտում, որ ՀՀ տնտեսության զարգացման գերակա շյուղերից է:

Շուկայական տնտեսության պայմաններում չափազանց կարևոր է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմա-

կերպումն ու կառավարումը, ուստի մասնաճյուղում գործող Տնտեսագիտություն մասնագիտության շրջանավարտը պատկերացում է կազմում տնտեսագիտության տեսական դրույթների, տնտեսական համակարգերի, ազատ շուկայական հարաբերություններում պետության եւ տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունների համակարգերի մասին: Շրջանավարտները կարող են դառնալ լեռնային եւ մետալուրգիական ձեռնարկությունների ճարտարագետ-տնտեսագետներ, առևտրային կազմակերպությունների հաջողակ հիմնադիր ու բաժնետեր, հնուտ գործադիր տնօրեն ու մասնագետ, տնտեսական ոլորտի հետ առնչվող պետական գերատեսչությունների (նախարարությունների, մարզպետարանների, հարկային, մաքսային եւ այլ մարմինների) աշխատակից, բիզնեսի աջակցող ոչ առևտրային կազմակերպությունների փորձագետ:

Մեր հանրապետության զարգացման անենարդիական ուղղություններից է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որ ունի զարգացման հեռանկար: Այդ իսկ պատճառով մասնաճյուղի Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտությունը ընտրելու դեպքում շրջանավարտները հնարավորություն կունենան ձեռք բերել անհրաժեշտ գործնական հմտություններ համակարգչային տեխնոլոգիաների ու ծրագրավորման, դրանց կիրառությամբ մաթեմատիկական մոդելավորման, տեղեկատվության հաղորդման, մշակման, պահպանման

եւ կառավարման ավտոմատացված համակարգերի ու ընդհանրապես արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: 2014թ.-ից իրականացվում է նաեւ ընդունելություն մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտության «Ֆինանսաբանկային քոմփյութերային համակարգեր» մասնագիտացմամբ:

2005թ.-ից ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում իրականացվում է ընդունելություն Շինարարություն մասնագիտությամբ, որ 2016-17 ուստարում միայն հեռակա ուսուցմամբ կիրականացնի ընդունելություն: Այս տարիների ընթացքում մասնաճյուղի շրջանավարտներն աշխատում են տարբեր շինարարական կազմակերպություններում՝ հաջողությամբ շարունակելով այս բնագավառում մեր ունեցած հարուստ ավանդույթները:

Ոչ իհարկե թվային փաստերով, բայց անգն աչքով կարելի է արձանագրել, որ աշակերտների շրջանում հետաքրքրություն կար մասնաճյուղի իրականացրած կրթության նկատմամբ, եւ նրա որոշակի մասն այս ուստարում կղաճառ մասնաճյուղի դիմորդ: Մի քանի աշակերտից փորձեցինք ճշտել, թե առհասարակ մասնագիտությունը ընտրելիս ինչ սկզբունքով են առաջնորդվում: Վարձիքները տարբեր էին, բայց մի բան ակնհայտ է. ներկայիս սերունդը մասնագիտությունը ընտրելիս հաշվի է առնում հետագայում բարձր աշխատավարձ ստանալու հանգամանքը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

հանգստանալու, ընթերցելու նպատակով, ու... գարնանալի բան, հարյուրավոր գրքերի մեջ ձեռքն էլի գնում, ընտրում է Սահյանի գրքերից որեւէ մեկը. «չգիտեմ, ինչն էլ է այդպես» լինում:

Միջոցառման վերջին ակորդը տանտիրոջ իրավունքով Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին էր: Ըստ նրա՝ Համո Սահյանի ծննդավայրը Լորը չէ, այլ վաղնջական ժամանակներից Սիսական անունը կրող երկիրը, չարի սերմը չհանդուրժող Սյունյաց լեռնաշխարհը: Նրա ստեղծածն էլ յուրաքանչյուր հայի սեփականությունն է՝ աշխարհի որ ծայրում էլ նա գտնվի: Իսկ բանաստեղծի տունը, ասել է թե՛ Սիսիանը, ամբողջ Սյունիքը, հյուրասեր ու հյուրաշատ եղել է եւ այդպիսին էլ կա: Ամեն մի հայ, բարի նպատակով մեզ մոտ եկող օտարական

սպասված են: Սահյանի տունը նաեւ նրանց տունն է...

\*\*\*

Ամպը, քսվելով բանաստեղծի սիրելի Գյազբելի փեշերին, իջնում, լցվում էր գյուղը երկու կես անող ձորը: Լորի ծայրամասային տներն արդեն չէին երեւում, կուլ էին գնացել մառախուղին: Անձրեւ էր գալիս, որն ավելի առատ ու խոխոջուն էր դարձնում Գյազբելի փեշերի ձյան հալոցքից սկիզբ առած գետակի հոսքը: Ամպի տակից ջուր էր գալիս... Ակամա հիշեցի թանգարանի պատից այցելուներին ժպտացող մեր մեկ ուրիշ մեծի արտահայտությունը թունամյանական այս հայտնի տողի վերաբերյալ: Սիլվա Կապուտիկյանն է ասում. «Ամեն անգամ Համո Սահյան կարդալիս նորովի են հասկանում «ամպի տակից ջուր է գալիս» բառերի իմաստը»:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի ամուսնով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ծե 1/,
2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծե 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար

մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մայիսի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. մայիսի 25-ին ժամը 15:00-ին, Սյունիքի մարզի Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Սյունիքի մարզ, Բարիկավան 3/1 Տեղեկությունների համար զանգահարել՝ 028561287, 098309022 հեռախոսահամարներով:

# Սյունեցի կամավորականները մեկնեցին հակամարտության գոտի՝ հերթափոխելու իրենց ընկերներին

Ապրիլի 17-ին սյունեցի կամավորականների երկրորդ խումբը մեկնեց ԼՂՀ՝ հերթափոխելու ապրիլի 3-ից դիրքերում գտնվող իրենց 250 ընկերներին:

Այս անգամ եւս Գորիսից Ստեփանակերտ մեկնող կամավորականների խմբին ուղեկցում էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Ստեփանակերտ մայրաքաղաքից նրանք կբաժանվեն ըստ պաշտպանական գոտիների եւ ԼՂՀ զինված ուժերի մարտիկների հետ առաջիկա օրերին կմասնակցեն Արցախի սահմանների անառիկության ապահովմանը: Կապանի ջոկատը գլխավորում է

Արցախյան պատերազմի վետերան Արմենակ Ստեփանյանը: Ի դեպ, կապանցի կամավորականները մեկնել են երկու հոսքով՝ այնտեղ միավորվելու ծրագրով:

Գորիսի ջոկատի հրամանատարը Սուրիկ Բաղդասարյանն է՝ ԵԿՄ տարածքային կառույցի ղեկավարը:

Քաջարանի ջոկատում հիմնականում ընդգրկվել էին «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության աշխատակիցները, ջոկատի հրամանատարն է Ռաֆիկ Իսկանդարյանը՝ նույն ընկերության մեխանիկական արտադրամասի պետը:

Մեղրու ջոկատին այնտեղ կփոխարինեն Ագարակ քաղաքի կա-



մավորականները՝ ԵԿՄ տարածքային կառույցի ղեկավար Հայկ Աղամալյանի գլխավորությամբ: Սիսիանի ջոկատն Արցախ մեկնեց այսօր՝ ապրիլի 18-ին: Երկ-

րորդ հերթափոխի հրամանատարը դարձյալ Աշոտ Մինասյանն է: Տղաներին՝ բարի ծառայություն եւ բարի վերադարձ: Իսկ առաջին հերթափոխի կա-

մավորականները վերադառնում են Սյունիք՝ իրենց առաքելությունը պատվով կատարած: **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
18 ապրիլի 2016թ.

# Դիպլոմներ եւ դրամական պարգեւներ՝ առարկայական օլիմպիադայում հաղթողներին

2015-16 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլին մասնակցության իրավունք ստացած 768 աշակերտից մասնակցել է 671-ը, որից առավել խորը գիտելիքներ ցուցաբերած 179 հոգի Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի կողմից պարգևատրվել է դիպլոմով եւ դրամական պարգեւով: Առաջին կարգի դիպլոմով պարգևատրվել է 51 աշակերտ (յուրաքանչյուրին՝ քան հազար դրամ), երկրորդ կարգի դիպլոմով՝ 59 աշակերտ (յուրաքանչյուրին՝ տասնհինգ հազար դրամ) եւ երրորդ կարգի դիպլոմով՝ 69 աշակերտ (յուրաքանչյուրին՝ տասը հազար դրամ):

Մարզային փուլում դիպլոմներով պարգևատրված աշակերտներից 68-ը Կապանի տարածաշրջանի դպրոցներից են, 43-ը՝ Գորիսի, 39-ը՝ Սիսիանի, իսկ 14-ը՝ Մեղրու:

Մարզային փուլում առավել ակտիվ են եղել Կապանի N2 եւ Գորիսի N 4 ավագ դպրոցների աշակերտները, որոնք զբաղեցրել են համապատասխանաբար 34 եւ 32 մրցանակային տեղ: Մրցանակային դպրոցներից Կապանի N7 դպրոցի աշակերտները գրավել են վեց մրցանակային տեղ:

Առաջին կարգի դիպլոմով պարգևատրված 51 աշակերտից 10-ը Կապանի N2 դպրոցի աշակերտներն են, ութական առաջին կարգի դիպլոմներով են պարգևատրվել Կապանի N3 միջնակարգ եւ Սիսիանի ավագ դպրոցների աշակերտները:

Գյուղական դպրոցներից մարզային փուլում առավել աչքի են ընկել Խնձորեսկի (6 մրցանակային տեղ), Աճանանի (3 մրցանակային տեղ), Սառնակունքի (2 մրցանակային տեղ) միջնակարգ դպրոցների աշակերտները:

Մարտի 13-ից մեկնարկած համապետական փուլին մարզից մասնակցելու իրավունք ունեցող 106

աշակերտից մասնակցել է 89-ը՝ 14 առարկայից, որից 5 հոգի արժանացել է առաջին, 9 հոգի՝ երկրորդ, 8 հոգի՝ երրորդ կարգի դիպլոմների, իսկ 14 հոգի՝ գովասանագրի:

Մարզի տարբեր քաղաքներում այս օրերին տվյալ տարածաշրջանի հաղթող աշակերտներին են փոխանցվում մարզպետի կողմից տրամադրված դիպլոմներն ու դրամական պարգեւները:

Ապրիլի 18-ին մարզպետարանի նիստերի դահլիճում կայացած միջոցառմանը փոխմարզպետ Վարդան Դավթյանն իր շնորհավորական խոսքում նշեց, որ կրթության ոլորտում իրականացվող օլիմպիադաների նպատակը եղել է մնում է տաղանդավոր աշակերտներին հայտնաբերելը: Նրանց գրանցած հաջողությունները մեր երկրի ապագայի երաշխիքներն են: Չնայած որոշակի թերություններին՝ այնուամենայնիվ մարզի աշակերտներն ունեն նշանակալի հաջողություններ, եւ ղեկավարությունն ակնկալում է տարեցտարի դրանց ավելացում: Բայց միեւնույն ժամանակ փոխմարզպետը նշեց, որ յուրաքանչյուր տարի անցկացվող օլիմպիադայից պիտի նաեւ որոշակի եզրակացություններ անել՝ շտկելով թերությունները, հարկ եղած դեպքում նաեւ հասցեական նշելով որոշ դպրոցների բացթողումները: «Տպավորիչ է այն, որ մարզի աշակերտներն առարկայական օլիմպիադայի մարզային փուլում գրանցած հաջողություններն ամրագրել են նաեւ հանրապետական փուլի հաջողություններով: Մեր մարզին, երկրին, հասարակությանն անհրաժեշտ են կիրք, բանիմաց երեխաներ: Մեր խոնարհունը բերենք նաեւ այն մանկավարժներին, ովքեր էլ ավելի են նպաստում այդ երեխաների ինքնադրսեւորմանն ու ձեռքբերումներին», - նշեց Վարդան Դավթյանը:

Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ

Ալեքսանյանն իր ելույթում շեշտը դրեց օլիմպիադաների կազմակերպման եւ անցկացման թերությունների վրա: Նա նշեց, որ ցավալի է, որ հայոց լեզու առարկայից այս ուստարում հանրապետական փուլում մրցանակային տեղ չունենք: Առավել ակնհայտ թերություններից մեկն էլ դպրոցական փուլում ձեռք բերած միավորների եական տարբերությունն է տարածաշրջանային եւ մարզային փուլերի միավորների համեմատ: Վարչության պետը նշեց նաեւ, որ ավագ դպրոցներն ավելի ակտիվ մասնակցություն պիտի ունենան առարկայական օլիմպիադաներին: Կարելու հանգամանք է նաեւ հանձնաժողովների կազմումը. հավանաբար զալիք ուստարվա առարկայական օլիմպիադաների տարածաշրջանային եւ մարզային հանձնաժողովներում կընդգրկեն նաեւ դասախոսներին:

«Գիտելիքն է ձեր ամենամեծ կարողությունը, որի շնորհիվ էլ ձեւավորվում է արժեհամակարգը՝ հետագայում նպաստելով մեր երկրի առաջընթացին», - նշեց վարչության պետը եւ նորանոր հաջողություններ մաղթեց դպրոցականներին:

Ուրախալի է այն փաստը, որ դպրոցի շենքային պայմաններն այնքան էլ եական չեն աշակերտի առաջադիմության համար, քանի որ գյուղական դպրոցների ներկայացուցիչները նույնպես նշանակալի հաջողություններ են գրանցել: Արդյունքներն ամփոփելիս հաճախ է շեշտվում այն հանգամանքը, որ մաթեմատիկայից եւ ֆիզիկայից մրցանակային տեղեր չեն գրավում՝ չնայած այս տարի հանրապետական փուլում մաթեմատիկայից մրցանակային մեկ տեղ ունենք: Այս հարցի վերաբերյալ իր առաջարկությունը ներկայացրեց Վերին Խոտանանի միջնակարգ դպրոցի տնօրեն Խաչիկ Բաղդասյանը՝ նշելով, որ մեր աշակերտները մրցում են ֆիզմաթ թեքումով դպրոցի աշակերտների հետ, որտեղ այդ առարկաներն ուսումնասիրում են բոլորովին այլ մակարդակով: Ուստի անհրաժեշտ է մեր դպրոցներում եւս քայլեր ձեռնարկել այդ առարկաներից մեր աշակերտների մակարդակը բարձրացնելու համար:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Կվերագործարկվի Գորիսի բժշկական կենտրոնի փութերկույտի բաժանմունքը

Ապրիլի 15-ին կառավարության հերթական նիստի ընթացքում ներկայացվեց ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 8 հավելվածի ՀՀ Սյունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «II. Գորիսի տարածաշրջան» բաժնում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին որոշման նախագիծ: Ըստ որի՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ հակատուբերկույտային բաժանմունքը պիտի տեղակայվի «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ուսումնական մասնաշենքում: 2009թ.-ից այն հարմարեցվել է հակատուբերկույտային բաժանմունքի պահանջներին: ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում, հնարավոր է նաեւ մասնաշենքի հիմնանորոգում:

Որոշման նախագծում մասնառնաման հիմնավորվում է Գորիսի բժշկական կենտրոնի տուբերկույտի բաժանմունքի վերագործարկման կարեւորությունը, որի գործունեությունը դադարեցվել էր ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 24-ի N 159-Ն որոշմամբ: Բաժանմունքը սպասարկել է Գորիսի եւ հարակից տարածքների, մասնավորապես՝ Սիսիանի եւ Քաջաթաղի բնակչությանը: Դրա վերագործարկումը կնպաստի առողջապահության ոլորտում ընթացող բարեփոխումների եւ իրավական դաշտի մերթաշնականացմանը, բնակչությանը մատուցվող բժշկական օգնության եւ սպասարկման մատչելիության ապահովմանը: Հակատուբերկույտային բաժանմունքը վերագործարկելու պարագայում նախատեսվում է տարեկան սպասարկել 70-80 հիվանդի:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՒՄ Է** 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոր: Չանգահարել՝ (094) 766 425:

**ՎԱՃԱՌՈՒՄ Է** մեկ սենյականոց բնակարան Քաջարան քաղաքի Խանջյան փողոցի չորս հարկանի շենքի 3-րդ հարկում: Ցանկացողները զանգահարեն 091 98 40 95 հեռախոսահամարով:

# Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**

ՍԱՐՏԱԿԱՆ ԴՐՄԱՍԻՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՊՆՏՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՆՅՈՒՅԵՐ: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 21.04.2016թ.:

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին՝ աներձագի՝ Կամո Սաֆարյանի վաղաժամ մահվան կապակցությամբ: